ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

13 ՀՈՒԼԻՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 125-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,02210 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաեվ անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,02210 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0010-0012 կադաստրային ծածկագրով հողամասը ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճ. 45/2 հողամաս:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

20 ՀՈՒԼԻՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 126-Ա

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի
Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ.
ա)- աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ (պաշտոնի ծածկագիրը՝ 2.3-2)
- աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ (պաշտոնի ծածկագիրը՝ 3.1-1)
- աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ (պաշտոնի ծածկագիրը՝ 3.1-2)
-աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ (պաշտոնի ծածկագիրը՝ 3.1-8)
բ)-աշխատակազմի զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ (պաշտոնի ծածկագիրը՝ 2.3-5)
-աշխատակազմի առաջատար մասնագետ (պաշտոնի ծածկագիրը՝ 3.1-10)
-աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (պաշտոնի ծածկագիրը՝ 3.3-8)
-աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (պաշտոնի ծածկագիրը՝ 3.3-9)
2. Սույն որոշման առաջին կետի «ա» ենթակետում նշված մրցույթների օր նշանակել 2023

թվականի օգոստոսի 22-ը:
3.Սույն որոշման առաջին կետի «բ» ենթակետում նշված մրցույթների օր նշանակել 2023 թվականի օգոստոսի 23-ը:
4. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման առաջին կետում նշված մրցույթների անցկացման մասին հայտարարությունների հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը:
Հայտարարությունների տեքստերը՝ համաձայն հավելվածների:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

21 ՀՈՒԼԻՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 127-Ա

ԳԵՎՈՐԳ ՄԵԼՍԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ 10-003-0029-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գևորգ Մելսի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, Վայք համայնքի Վայք քաղաքի 10-003-0029-0013 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը հասցեավորել որպես Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճուղի, 32 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

21 ՀՈՒԼԻՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 128-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՁՈՆԻԿ ԱՂԱՋԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱԲԱԺՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, 2-րդ, 3-րդ մասերով, 8-րդ մասի 2-րդ կետով և 9-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ Ժողովրդական դեպուտատների Վայքի ավանային խորհրդի գործադիր կոմիտեի 1990թ-ի սեպտեմբերի 28-ի նիստի թիվ 9 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Ձոնիկ Աղաջանի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և զբաղեցրած 0.120 հա հողամասը հասցեավորել Վայք համայնք, քաղաք Վայք, Շինարարների փողոց, 38 բնակելի տուն:
2. Վերականգնել հողահատկացման հիմքերը ըստ կից ներկայացվող չափագրման տվյալների՝ նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:
3. Ընդունել ի գիտություն, որ որոշման 1-ին կետում նշված շինությունը կառուցվել է մինչև 2000թ., կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենքսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի , այդ թվում ինժեներատրասպորտային օբյեկտների օտարման գոտում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:
4. Ճանաչել քաղաքացի Ձոնիկ Գրիգորյանի /ծնված՝ 11.04.1964թ./ սեփականության իրավունքը Վայք համայնքի Վայք քաղաքի Շինարարների փ. 38 հասցեում գտնվող հողաբաժնի չափից ավել օգտագործվող 300 հա հողամասի նկատմամբ:
5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրային կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

21 ՀՈՒԼԻՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 129-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 462 -Նորոշումներն ուժը կորցրած ճանաչելու եվ 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի, 11/9 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակը 27,2 քմ ընդհանուր մակերեսով՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.00327 հա մակերեսով հողատարածքով, գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղ. Միրան Սիրեկանի Հունանյանին՝ շինության համար՝ 38 680 /27.2 x 1422/ (երեսունութ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ և հողատարածքի համար՝ 61 400 /32.7x1877.7/ (վաթսունմեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ արժեքով:
2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

24 ՀՈՒԼԻՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 130-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08.06.2023Թ-Ի ԹԻՎ 107-Ա «ՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 08.06.2023 թվականի թիվ 107-Ա որոշման բովանդակության 1ին կետում նշված «բնակելի կառուցապատման» բառերից հետո ավելացնել «որպես բնակարան» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:
2.Ֆինանսական բաժնին՝ ղեկավարվել օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

25 ՀՈՒԼԻՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 131-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՁԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,010 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաեվ անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Ձառիթափ բնակավայրում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,010 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-022-0032-0004 կադաստրային ծածկագրով բնակելի տունը ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, գյուղ Ձառիթափ, 2-րդ փ. 3/1 բնակելի տուն:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

25 ՀՈՒԼԻՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 132-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հանրապետության Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի 3.2 կետի պահանջները և հաշվի առնելով «ԱԶԱՏԵԿ ՀԷԿ» ՓԲԸ-ի տնօրեն Գոռ Բաբայանի 25.07.2023թ.-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 1-ին փակուղի, թիվ 2 հողամաս հասցեում գտնվող «ԱԶԱՏԵԿ ՀԷԿ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17032021-10-0009 վկայական), 10-003-0037-0001 կադաստրային ծածկագրով, 1,49 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների:
2.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը գրանցելու համար:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

27 ՀՈՒԼԻՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 133-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Վայք համայնքի ղեկավարի 29 նոյեմբերի 2022 թվականի թիվ 229-Ա որոշմամբ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային և պետական սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի օտարման մրցութային հանձնաժողովի կողմից ներկայացված ներքոհիշյալ հողամասերը վարձակալության տրամադրելու նպատակով հայտարարել մրցույթ, մրցույթի օր նշանակել սույն թվականի օգոստոսի 29-ը:
ա/ Ազատեկ բնակավայրի տարածքում գտնվող 10-005-0704-0013 կադաստրային ծածկագրով, 4.00406 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքով հողամասը.
բ/ Արին բնակավայրի տարածքում գտնվող 10-009-0115-0118 կադաստրային ծածկագրով, 16.07495 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսքով հողամասը.
գ/Արին բնակավայրի տարածքում գտնվող 10-009-0115-0117 կադաստրային ծածկագրով, 18.38345 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսքով հողամասը.
դ/ Վայք քաղաքի Երիտասարդական փ. 11 հասցեում գտնվող 10-003-0024-0342 կադաստրային ծածկագրով, 0.22602 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասը.
ե/ Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 47/5 հասցեում գտնվող 10-003-0026-0033 կադաստրային ծածկագրով, 0.015 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը.
2.Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ cityvayk@gmail.com

27 ՀՈՒԼԻՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 134-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ԵՐՎԱՆԴԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ՁԵԴԵԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 25.07.2008 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹԻՎ 726 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 2.2 ՀԱ ԱՐՈՏԻ ՄԱՍՈՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, Վայոց ձորի մարզի Ձեդեայի գյուղապետարանի և Վարդան Սարգսյանի միջև 2008 թվականի հուլիսի 25-ին կնքված՝ Գույքի վարձակալության պայմանագրի 8.2-րդ կետի, հաշվի առնելով վարձակալ Վ.Սարգսյանի դիմումը (մտից N U-72, 21.07.2023 թ.)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Երկկողմանի համաձայնությամբ լուծել Վայոց ձորի մարզի Ձեդեայի համայնքապետարանի և քաղաքացի՝ Վարդան Երվանդի Սարգսյանի միջև 2008թ. հուլիսի 25-ին կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը 2.2 հա արոտի մասով /վկայական N0091626/:
2.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

28 ՀՈՒԼԻՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 135-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՀՐԱՅՐ ՎԱՉԳԵՆԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.5 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 97-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Հրայր Վազգենի Թորոսյանին վարձակալության իրավունքով պատկանող Վայք համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 1.5 հա հողամասի հողատեսքը գյուղատնտեսական (այլ) հողատեսքից դարձնել այգի (կորիզավոր):
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**